

Արձանագրություն № 4

2022 թվականի հոկտեմբերի 27-ին կայացավ ՀՀ ԿԳՄՄՆ «Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի՝ խորհրդի հեռավար նիստը՝ խորհրդի 6 անդամների մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. Անդրադարձ նախորդ նիստի որոշումների կատարմանը (զեկուցող՝ Ա. Խաչյան)
2. Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների քննարկում և հաստատում (Ձեկուցող Կ. Հովակիմյան)
3. Ա. Երզնկյանի անվ. հ.118 ավագ դպրոցի 2022թ. 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվության քննարկում (զեկուցող՝ Մ. Կոստանյան)
4. Աշխատողների և սովորողների խրախուսման հարցի քննարկում (զեկուցող՝ Կ. Հովակիմյան)

Լսեցին 1. Կառավարման խորհրդի նախագահ Ա. Խաչյանին, որը ներկայացրեց նախորդ նիստի որոշումները և հիմնավորեց որոշումների կատարված լինելը:

Որոշեցին 1. Ընդունել ի գիտություն:

Լսեցին 2. Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանին, որը, հիմնավորելով ներքին կարգապահական կանոնների փոփոխության անհրաժեշտությունը, ներկայացրեց դպրոցի ներքին կարգապահական նոր կանոնների նախագիծը:

Որոշեցին 2. Հաստատել ներքին կարգապահական կանոնների նախագիծը:

Լսեցին 3. Դպրոցի գլխավոր հաշվապահ Մ. Կոստանյանին, որը ներկայացրեց դպրոցի 2022 թ. 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունը:

Որոշեցին 3. Հավանություն տալ դպրոցի 2022թ. 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությանը:

Լսեցին 4. Դպրոցի տնօրեն Կ. Հովակիմյանին, որն առաջարկեց դրամական խրախուսման արժանացնել դպրոցի մի քանի աշխատողների և սովորողների՝ հիմնավորելով խրախուսանքի անհրաժեշտությունը:

Որոշեցին 4. Հավանություն տալ դպրոցի մի քանի աշխատողների և սովորողների դրամական խրախուսման արժանացնելու առաջարկին:

Խորհրդի նախագահ՝
Խորհրդի քարտուղար՝



(Ա. Խաչյան)
(Ա. Թումադայան)